FO.OD-610.1-2 Ուժի մեջ է՝20.05.2019թ
«Հրապարակային»
«Արդշինբանկ»ՓԲԸ
Հաստատված է ի փոփոխումն «PL 61-03» -ի
«Խորհրդի»
2020թ. օգոստոսի 24-ի թիվ 05/20-07 Լ որոշմամբ
Ուժի մեջ է մտնում ՝ 27.08.20թ.
Խորհրդի նախագահ՝ Կարեն Սաֆարյան /ստորագրված է/

PL-720.01

ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նպատակ

Շահութաբաժնային քաղաքականության նպատակն է սահմանել «Արդշինբանկ» ՓԲԸ-ի շահութաբաժնային քաղաքականության հիմնական սկզբունքները, Բանկի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման պայմանները, ձևը, վճարման մասին որոշման ընդունման կարգը, կարգավորել Բանկի և բաժնետիրոջ (այդ թվում արտոնյալ բաժնետիրոջ) միջև բաժնետոմսերի (այդ թվում արտոնյալ) հետ կապված հարաբերությունները:

2. Պատասխանատուներ

Սույն քաղաքականության իրականացման պատասխանատվությունը կրում է Բանկի Ֆինանսական տնօրինությունը, Գլխավոր հաշվապահը, Ընդհանուր ժողովի և Խորհրդի քարտուղարները, Իրավաբանական ծառայությունը:

3. Սկզբունքներ

3.1. Շահութաբաժնային քաղաքականությունն իրենից ներկայացնում է Բանկի շահույթի կառավարման ընդհանուր քաղաքականության մի մասը, որը կայանում է Բանկի շուկայական արժեքն առավելագույնի հասցնելու նպատակով շահույթի սպառվող և կուտակվող մասերի միջև լավագույն համամասնությունների որոշման մեջ:

3.2. Շահութաբաժնային քաղաքականությունը հիմնվում է ներդրումների գրավչության, Բանկի ֆինանսական կայունության, կապիտալացման և իրացվելիության բարձրացման, Բանկի և նրա բաժնետերերի շահերի հավասարակշռվածության, ներդրված միջոցների շահութաբերության ապահովման վրա:

3.3. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) կամ տարեկան շահութաբաժինների կամ նախորդ տարիների (կուտակված) շահույթից շահութաբաժինների վճարման մասին:

3.4. Շահութաբաժինների վճարման և դրանց չափերի մասին որոշում ընդունելու ժամանակ հաշվի են առնվում Բանկի իրացվելիության ու վճարունակության ընթացիկ և կանխատեսվող մակարդակների ցուցանիշները, Բանկի հեռանկարային զարգացման ծրագիրը և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

3.5. Բանկի կողմից շահութաբաժինների վերաբերյալ որոշումների կայացումն ու շահույթի բաշխումը/վճարումը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ, շահութաբաժնային քաղաքականությամբ և Բանկի այլ ներքին իրավական ակտերով սահմանված պահանջերին համապատասխան և համաձայն դրանցով սահմանված Բանկի կառավարման մարմինների (Ընդհանուր ժողով և Խորհուրդ) միջև իրավասությունների բաշխման սկզբունքի:

3.6. Բանկն իր ինտերնետային կայքում հրապարակում է Շահութաբաժնային քաղաքականությունը և շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշման մասին տեղեկատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով, ինչն ապահովում է շահութաբաժինների վճարման մեխանիզմի թափանցիկության սկզբունքը:

3.7. Բանկի սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են դրամով և/կամ Բանկի բաժնետոմսերով, իսկ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են միայն դրամով:

3.8. Շահութաբաժիններն արտահայտվում են մեկ բաժնետոմսին ընկնող գումարով:

3.9. Բանկի սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Բանկի կողմից չեն երաշխավորվում:

3.10. Բանկի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները կարող են վճարվել եռամսյակային կտրվածքով՝ ՀՀ օրենսդրությանը, Բանկի կանոնադրությանը, սույն քաղաքականությանը և այլ ներքին իրավական ակտերին համապատասխան:

3.11. Բանկի տնօրինության տակ գտնվող Բանկի բաժնետոմսերով շահութաբաժիններ չեն հաշվարկվում:

3.12. Արտոնյալ բաժնետոմսերը Բանկի հիմնական կապիտալի հաշվարկում ընդգրկվելու համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջները (պայմանները) փոփոխվելու դեպքում, դրանցից բխող սույն քաղաքականության մեջ կատարվող անհրաժեշտ փոփոխությունները ներկայացվում են ՀՀ կենտրոնական բանկի նախնական համաձայնությանը, առանց որի փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն (Բանկի և արտոնյալ բաժնետիրոջ համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

3.13. Բանկի լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման Բանկի մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների:

4. Սահմանումներ և հապավումներ

«Բանկ»՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,

«Շահութաբաժնային քաղաքականություն»՝ Բանկի շահութաբաժնային քաղաքականություն,

«Ընդհանուր ժողով»՝ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողով՝ Բանկի կառավարման բարձրագույն մարմին,

«Կանոնադրություն»՝ Բանկի կանոնադրություն,

«Խորհուրդ»՝ Բանկի խորհուրդ,

«Վարչություն»՝ Բանկի վարչություն՝ Բանկի կոլեգիալ գործադիր մարմին,

«Ֆինանսական ժամանակաշրջան»՝ այն ժամանակաշրջանը (եռամսյակ, կիսամյակ, տարի, տարիներ), որի համար վճարվում են շահութաբաժինները:

5. Առնչվող փաստաթղթեր

«Արդշինբանկ» ՓԲԸ կանոնադրություն,
«Արդշինբանկ» ՓԲԸ Ընդհանուր ժողովի կազմակերպման և վարման կարգ,
«Արդշինբանկ» ՓԲԸ Խորհրդի կանոնակարգ:

6. Գործընթացներ և խնդիրներ

Սույն քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները.

	Բիզնես-գործընթացներ	**Խնդիրներ**
1	Շահութաբաժինների վճարման պայմանների և	- շահութաբաժինների վճարման հերթականության սահմանում,

	սահմանափակումների սահմանում	- շահութաբաժինների վճարման աղբյուրի սահմանում, - շահութաբաժինների վճարման այլ պայմանների սահմանում, - շահութաբաժինների վճարման սահմանափակումների սահմանում:
2	Տարեկան շահութաբաժինների և նախորդ տարիների (կուտակված) շահույթից շահութաբաժինների վճարում	- շահութաբաժինների սահմանաչափերի որոշում, - շահութաբաժինների վճարման մասին որոշման կարգի սահմանում, - շահութաբաժինների վճարման ժամկետի սահմանում, - շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմում,
3	Միջանկյալ շահութաբաժինների վճարում	- շահութաբաժինների սահմանաչափերի որոշում, - շահութաբաժինների վճարման մասին որոշման կարգի սահմանում, - շահութաբաժինների վճարման ժամկետի սահմանում, շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազմում,

6.1. Շահութաբաժինների վճարման պայմանները

6.1.1. Բանկն առաջին հերթին վճարում է արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները՝ ապահովելով կանոնադրությամբ սահմանված չափով կամ բանաձևով հաշվարկված շահաբաժինների ստացումը:

6.1.2. Բանկի հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններն ամբողջությամբ վճարելուց հետո միայն վճարվում են փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժինները: Ընդ որում, Բանկի փոփոխական շահութաբաժնով փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի տարբեր դասերի դիմաց վճարվող շահութաբաժինների վճարման հերթականությունը սահմանվում է Կանոնադրությամբ:

6.1.3. Բանկի սովորական բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են զուտ շահույթից (կուտակված շահույթից), իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ենթակա են վճարման միայն զուտ շահույթից և/կամ դրա հաշվին ձևավորված հատուկ այդ նպատակով ստեղծված Բանկի հիմնադրամների հաշվից:

6.1.4. Բանկի բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են ՀՀ օրենսդրության համաձայն հարկերը վճարելուց հետո:

6.1.5. Բանկի բաժնետերերին շահութաբաժինների վճարման պայմաններն են՝

6.1.5.1. Բանկում զուտ շահույթի առկայությունը, որը ստացվել է նախորդ ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարման դեպքում՝ կամ զուտ շահույթի հաշվին ձևավորված հատուկ այդ նպատակով ստեղծված Բանկի հիմնադրամներում դրամական միջոցների առկայությունը,

6.1.5.2. շահութաբաժինների վճարման՝ սույն քաղաքականության 6.2 բաժնով նախատեսված սահմանափակումների բացակայությունը,

6.1.5.3. Ֆինանսական ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութաբաժինների վճարման (հայտարարման), դրանց չափի և վճարման կարգի մասին Բանկի իրավասու մարմնի (Ընդհանուր ժողովի կամ Խորհրդի) որոշման առկայությունը:

6.2. Շահութաբաժինների վճարման սահմանափակումները

6.2.1.Շահութաբաժինների վճարման սահմանափակումները պայմանավորված են Բանկի ֆինանսատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներով և սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի իրավական ակտերով, ինչպես նաև սույն քաղաքականությամբ:

6.2.2.Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

6.2.3. Բանկն իրավասու չէ ընդունել (հայտարարել) շահութաբաժիններ վճարելու մասին որոշում, եթե Բանկի խորհրդի կամ Ընդհանուր ժողովի որոշման ընդունման պահին առկա է կամ կարող է առաջանալ հետևյալ փաստերից որևէ մեկը.

6.2.3.1. նախորդ ֆինանսական տարիների (տարվա) կամ ընթացիկ ֆինանսական տարվա արդյունքներով ստացված (կուտակված) զուտ շահույթի բացակայություն,

6.2.3.2. շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ առկա է կամ այդ որոշման կատարման արդյունքում կարող է առաջանալ ՀՀ կենտրոնական բանկի և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները չկատարելու հնարավորությունը,

6.2.3.3. Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական հիմնադրամից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով:

6.2.4. Ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված ժամկետներում շահութաբաժիններ չվճարվելու դեպքում դրանք կուտակվում և վճարվում են հետագայում բաժնետիրոջ առաջին իսկ պահանջով, բացառությամբ սույն քաղաքականության 6.2.6 կետի 6.2.6.1 ենթակետում նշված դեպքի:

6.2.5. Հայտարարված, սակայն Բանկից անկախ պատճառներով բաժնետերերի կողմից չստացված շահութաբաժինները համարվում են չպահանջված շահութաբաժիններ:

6.2.6. Արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի Բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ Բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝

6.2.6.1. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,

6.2.6.2. Բանկի և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում Բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը:

6.2.7.Տվյալ արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել Բանկի վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ

ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից:

6.2.8. ՀՀ Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել Բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ Բանկի այլ մասնակիցների այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝

6.2.8.1. շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)

6.2.8.2. շահութաբաժինների բաշխման հետևանքով Բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

6.2.8.3. Բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

6.2.9. Շահութաբաժինների բաշխումը սահմանափակելու կարգը սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը:

6.2.10. Բանկը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում է ՀՀ կենտրոնական բանկին՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և պայմաններով:

6.3. Տարեկան շահութաբաժինների և նախորդ տարիների (կուտակված) շահույթից շահութաբաժինների վճարումը

6.3.1. Տարեկան շահութաբաժինների և նախորդ տարիների (կուտակված) շահույթից շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի, դրա վճարման ձևի ու ժամկետի մասին որոշումն ընդունում է Ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:

6.3.2. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում: Եթե Ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափն ըստ բաժնետոմսերի առանձին տեսակների և դասերի սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա այդ տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

6.3.3. Տարեկան շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

6.3.4. Տարեկան շահութաբաժինների և նախորդ տարիների (կուտակված) շահույթից շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

6.4. Միջանկյալ շահութաբաժինների վճարումը

6.4.1.Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 (հիսուն) տոկոսը:

6.4.2. Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 (երեսուն) օր հետո:

6.4.3. Միջանկյալ (եռամսյակային, կիսամյակային) շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 (տասը) օր առաջ:

6.4.4. Միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: